տապանն անդ հանգուցեալ է, թէ վերստին անդ կոչելոց է վարդապետն զազգս Հայոց, ի Վիրայն, ալրհնէ և հանգուցանէ ընդ Նոյի և ընդ Սեմայ և ընդ աբեթայ, և ընդ Լուսաւորչին Գրիգորի պարթևին յարքայութիւնն արդարոցն ի փառս անճառելի ըստ Պաւղոսի, թէ զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց*: Եւ գնացեալ պարոն Գաւըգի մելիքն ի յԱրկուսի և առեալ զմարմին սուրբ վարդապետին. և եղև հակառակութիւն ի մէջ քրիստոնէիցն վասն սիրոյ պատճառի, զի ոչ կամէին առնուլ զմարմինն, այլ մնալ առ ինքեանս: Եւ եղբայրն և աշակերտքն ոչ կամեցան, այլ առեալ տարան բազում քահանայիւք և ժողովրդաւք և բերեալ ի սուրբ ուխտն Մեծոփայ, յառաջին բնակութիւնն իւր և անդ հանգուցին ի գամբարանս ընդ առաջին սուրբ վարդապետացն Աստուածատուր մեռեալ յարոյց սուրբ վարդապետին և Մխիթար սքանչելագործին և աստուածաբան վարդապետին և Մովսէս քաջ քարտուղար ճղնաւոր վարդապետին և այլ ամենայն սրբոցս Բարեխաւսութեամբ և աղաւթիւք սոցա Քրիստոս Աստուած մեզ և ամենայն քրիստոնէից ողորմեսցի յաւուր սոսկալի դատաստանին ամէն:

---

* **Ա.** Կորնթ. Բ. 9.

1) ԲԵ. անտ Ա. եւ կմ. եթէ ԴԵ. նշանակէ. թէ Դ. ցոչելոց է

2) Ա. զազգս հայոց ի վիրայն. վարդպտն Բ. զազգս հայոց վրդ͞տն վիրայն ԳԵ. զազգս հայոց վդ͞պտն (Ե. վպ͞տն ?) ի վիր͞պն

3) ԱԲ. ընդ Սեմա Ա. ընդ յաբեթի ԳԵ. ընդ աբեթայ.

4) Ա. չ. պարթեւին Ա. յարքայութեանն Ե. յարքու͞ի

5) Ե. չ. ըստ պաւղոսի. թէ

7) ԱԲ. մելիքն Ա. յակուսի

8) Բ. զմարմինն 9) ԲԳԵ. չ. ի մէջ

10) Ա. որ զմարմին Դ. ոչ կամէին զտանել մարմնոյ սրբոյն Ա. առ յինքեանք Բ. առ ինքն Ա. չ. Եւ

11) Ա. ոչ կամեցան մնալ անդ

12) Դ. ժողովր͞դվք.

13) ԱԵ. մեծոքա ԲԳԵ. առաջին Դ. բնակութ͞ի

14) ԲԳԵ. ի գանբարանս Դ. ի գամբարանի Ա. ընդ յառաջին Դ. ընդ առաջին (գլխին ոց, առաջնոց) ԲԳԵ. վարդապետին

15) Դ. չ. սուրբ

16) ԳԵ. վարդապետի Դ. մօսէս 18) Ա. չ. աստուած

19—20) Բ. չ. յաւուր ամէն Դ. ողորմեսցի եւ ինձ գ͞րչս (ներմուծութին)